**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

*05.11.2013թ.* *թիվ 22-Ն*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետին, 54.1-ին հոդվածի 1-ին և 3-րդ մասերին համապատասխան՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Արջուտ համայնքի ղեկավարին կից, Արջուտ համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի։
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կարապետյան Ռոբերտ | | | |
| Մկրտչյան Սաթենիկ | | | |
| Դալլաքյան Վազգեն | | | |
| Հովհաննիսյան Գարիկ | | | |
| Շահինյան Անդրանիկ | | | |

Արջուտ համայնքի ղեկավար՝ Վ. Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

05.11.2013թ. թիվ 23-Ն

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33.1-ին հոդվածի 3-րդ կետին, 54.1-ին հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններին համապատասխան՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել հանրային բաց լսումների և՛(կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման և դրանց վերաբերյալ Արջուտ համայնքի ավագանուն տեղեկատվություն տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կարապետյան Ռոբերտ | [signature] | | |
| Մկրտչյան Սաթենիկ | [signature] | | |
| Դալլաքյան Վազգեն | [signature] | | |
| Հովհաննիսյան Գարիկ | [signature] | | |
| Շահինյան Անդրանիկ | [signature] | | |

Արջուտ համայնքի ղեկավար [signature] Մկրտչյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

*05.11.2013թ.* *թիվ 24-Ա*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-ին հոդվածով՝

Արջուտ համայնքի ավագնին որոշում է՝

1.Ստեղծել Արջուտ համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման քառամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) խորհուրդ՝ հետևյալ կազմով՝

1.Վարդան Մկրտչյան-համայնքի ղեկավար, խորհրդի նախագահ
2.Սայադ Մնացականյան-համայնքի ղեկավարի տեղակալ, խորհրդի նախագահի տեղակալ
3.Համիկ Մացակյան-գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար, խորհրդի քարտուղար
4.Ռոբերտ Կարապետյան – ավագանու անդամ, խորհրդի անդամ /համաձայնությամբ/
5.Վազգեն Դալլաքյան – ավագանու անդամ, խորհրդի անդամ /համաձայնությամբ/
6.Սաթենիկ Մկրտչյան – ավագանու անդամ, խորհրդի անդամ /համաձայնությամբ/
7.Սվետլանա Դալլաքյան – համայնքի բնակիչ, խորհդի անդամ /համաձայնությամբ/
8.Մելանյա Ղուկասյան – համայնքի բնակիչ, խորհրդի անդամ /համաձայնությամբ/
9.Արտակ Մկրտչյան – համայնքի բնակիչ, խորհրդի անդամ /համաձայնությամբ/:

2.խորհրդին՝ գործունեությունն իրականացնել համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 05-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքի ղեկավարին կից, Արջուտ համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 22-Ն որոշմամբ սահմանված կարգով:

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կարապետյան Ռոբերտ | [signature] | | |
| Մկրտչյան Սաթենիկ | [signature] | | |
| Դալլաքյան Վազգեն | [signature] | | |
| Հովհաննիսյան Գարիկ | [signature] | | |
| Շահինյան Անդրանիկ | [signature] | | |

Արջուտ համայնքի ղեկավար Վ. Մկրտչյան